Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի տնօրեն,

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Է. Հ. Օրդուխանյան

«17» նոյեմբեր 2025 թ.

**Առաջատար կազմակերպության կարծիքը**

**Սյուզաննա Արմենի Վարդանյանի՝ «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» թեմայով ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ**

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» թեմայով արդի հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

1. **Թեմայի հետազոտության արդիականությունը.** թեմայի հետազոտության արդիականությունը բավարար չափով հիմնավորված չէ, ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնական առումով:

2. **Աշխատանքի գիտականության վերաբերյալ.** ատենախոսության բուն շարադրանքն ու արված շեշտադրումները մեղմ ասած «կաղում են» գիտականությունից: Ատենախոսության շարադրանքն առավելապես նման է օրենքի նախագծի հիմնավորման կամ պրոֆիլային միջազգային կազմակերպությունների ուղեցույցների՝ նվազագույնի հասցնելով գիտական փաստարկումները, ընդհանրացումներն ու հետազոտության գիտական մեթոդաբանության կիրառումը:

Ասվածի ապացույց է այն փաստը, որ օգտագործված գրականության ցանկում անթույլատրելիորեն մեծ թիվ են կազմում դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները, գրեթե բացակայում են արևմտյան գիտական դպրոցը ներկայացնող

հեղինակների աշխատանքները, ինչն էականորեն թուլացնում է աշխատության գիտական արժեքը: Այս առումով, գտնում ենք, որ հետազոտության գիտական մակարդակը չի բավարարում նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

**3. Թեմայի բովանդակային ընդգրկումը.** քննարկվող աշխատանքի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ ընտրված թեման ինքնին անհամաչափորեն լայն է: Մաքսային ոլորտում վարչական պատասխանատվությունն իրենում ներառում է թե՛ նյութաիրավական ասպեկտը՝ բուն վարչական զանցանքները, և թե՛ ընթացակարգային մասը՝ վարչական վարույթը, ինչպես նաև վարչական յուրաքանչյուր զանցանքի մասով առկա են սուբյեկտի, օբյեկտի, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի, ներպետական և ԵԱՏՄ օրենսդրության համադրելիության, ազատ տնտեսական գոտիներում մաքսային իրավախախտումների առանձնահատկությունների և բազմաթիվ այլ հարցեր ու հարցադրումներ, որոնք օբյեկտիվորեն չեն կարող դառնալ մեկ միասնական գիտական աշխատանքի թեմա:

Բացի դրանից, ինքնին աշխատանքի վերտառությունն անթույլատրելիորեն ընդհանրական է և հարիր է առավելապես ուսումնական ձեռնարկին, դասագրքին կամ դրանց առանձին գլխի:

Որպես կանոն՝ աշխատանքի գիտական թիրախայնությունը սկիզբ է առնում վերտառությունից, որը նախանշում է աշխատանքի հետագա շարադրանքի ուղենիշներն ու հիմնական շեշտադրումները:

**4. Պաշտպանության ներկայացվող դրույթները.** պաշտպանության ներկայացվող դրույթները, ըստ էության, դասագրքային բնույթ ունեն և զուրկ են գիտականությունից: Օրինակ՝ պաշտպանության ներկայացվող առաջին դրույթն առավելապես հանրաճանաչ ճշմարտության ոլորտային տեղայնացում է: Մասնավորապես՝ հայտնի է, որ իրավախախտումների համար պատասխանատվության տեսակն ու խստությունը պայմանավորված է այդ թվում իրավախախտմամբ ոտնձգվող հասարակական հարաբերությունների սոցիալ-իրավական արժեքով: Անգամ եթե սույն իրողությունը մաքսային ոլորտում հավուր պատշաճի չի գործում, սոսկ այդ փաստի արձանագրումը, որքան էլ որ ճշմարտացի է, իրենում գիտական արժեք չի պարունակում:

Պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթն առհասարակ խնդրահարույց է: Մասնավորապես՝ կրկին հանրահայտ փաստ է, որ վարչական վարույթի ընդհանուր կարգավորումները տեղ են գտել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում, որը հանդես է գալիս ընդհանուր նորմի (lex generalis) կարգավիճակում, իսկ վարչական առանձին վարույթները կարգավորող օրենքներով այլ կարգավորումներ նախատեսված լինելու պարագայում գործում են այդ կարգավորումները՝ որպես հատուկ նորմեր (lex specialis): Սույն նորմատիվ իրողությունը տեղ է գտել ինչպես նշյալ օրենքում, այնպես էլ ամրապնդվել է Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով:

Հեղինակի «նորահայտ» մոտեցումը մաքսային իրավախատման փաստով վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի առհասարակ չկիրառման վերաբերյալ ոչ թե սոսկ «գիտական խիզախում է», այլ կայուն իրավակիրառ պրակտիկայի վերանայման փորձ՝ առանց բավարար չափով տեսական հիմնավորումների:

**5. Այլ դիտարկումներ.** քննարկվող աշխատանքը զերծ չէ նաև տեխնիկական բնույթի թերացումներից: Այսպես, աշխատանքում գիտական ապարատը պատշաճ ներկայացված չէ, մասնավորապես՝ ատենախոսության 8-9 էջերում վկայակոչված են արտասահմանյան մի շարք հեղինակների ազգանունները, առանց դրանց աշխատությունների վկայակոչման, էջ 20-ում նշված է Մ. Ս. Ստուդենկին, սակայն գրականության ցանկում բացակայում է նրա աշխատությունը: Օգտագործված գրականության ցանկում բացակայում են աշխատությունների ընդհանուր էջաքանակները, հրատարակչությունը և այլն:

Բացի դրանից, առկա են նաև տարատեսակ իմաստային և բովանդակային անհստակություններ:

Սույն աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետաիրավական հետազոտությունների բաժնի 2025 թվականի նոյեմբերի 13-ի նիստում, որին ներկա էին Բաժնի վարիչ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Շուքուրյանը,

իրավաբանական գիտությունների թեկնածու Դ. Հակոբյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Խալաթյանը, կրտսեր գիտաշխատող Վլ. Հովսեփյանը:

**Եզրակացություն**

**Սյուզաննա Արմենի Վարդանյանի՝ «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» թեմայով ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը խիստ թերի է, այն չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» (Կանոնակարգը հաստատված է ՀՀ կառավարության 08. 08. 1997 թ. հ. 327 որոշմամբ, փոփոխությունները՝ ՀՀ կառավարության 21.10.2010 թ. հ. 1436-Ն և 26. 02. 2015 թ. հ. 214-Ն որոշումներով) պահանջներին, այդուհանդերձ, մեծ վեարապահումով կարելի է թույլատրել հրապարակային պաշտպանության:**

**ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետահրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝**

**Հովհաննես Միքայելի Ստեփանյան**

**Պրոֆեսոր Հովհաննես Միքայելի Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու՝**

**Հայկ Վոլոդյայի Նազարյան**